ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/23-2

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2017թ. թիվ 03/27-1/13656-17 գրությամբ «Իսատիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2332 գրության հիման վրա, 25.07.2017թ. թիվ 03/27-1/13656-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Իսատիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2332 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Իսատիս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

Հայտերի բացման նիստի ավարտից հետո սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Իսատիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավերություններ 568.389 ՀՀ դրամի չափով, ուստի հանձնաժողովի կողմից «Իսատիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:»:

3. **<u>«Իսատիս» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը 27.07.2017թ. գրությամբ դիմել է «Իսատիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.07.2017թ. թիվ 03/27-1/13656-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Համո Դավուդին և Արբի Դավուդին:

4. **ՍՑ-ԷՍ-2017/23-2 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2017թ. թիվ 03/27-1/13656-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.07.2017թ. թիվ ԴՎԱ/2332 և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 12.09.2017թ. Խորհրդին տրված տեղեկանքը:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Իսատիս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության գծով:

Հանձնաժողովը 20.04.2017թ. թիվ 3 արձանագրության 4.3 կետով որոշել է Կոմիտեին հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 12.05.2017թ ստացված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Իսատիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 568,389 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 19.05.2017թ. թիվ 4 արձանագրությամբ մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,
- 48-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհուրդը 29.08.2017թ. հարցում է ներկայացրել Կոմիտե՝ խնդրելով տալ եզրակացություն այն մասին, արդյո՞ք «Իսատիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (20.04.2017թ.) օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, թե՝ ոչ:

Խորհրդի հարցմանն ի պատասխան՝ 12.09.2017թ. Կոմիտեից տրամադրվել է եզրակացություն առ այն, որ «Իսատիս» ՍՊԸ-ն 20.04.2017թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ (ԱԱՀ-334.6 հազ. դրամ, եկամտային հարկ-127.8 հազ.դրամ): Հիմք ընդունելով Կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության 07.09.2017թ. գրությամբ տրամադրած տեղեկատվությունը՝ 25.08.2017թ. Ընկերությունը ներկայացրել է ճշգրտված հաշվարկներ ԱԱՀ-ի 2017թ. փետրվար ամսվա, ինչպես նաև եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներ հունվար և փետրվար ամիսների համար, 24.06.2017թ. շահութահարկից 119.1 հազ. դրամ կատարվել է հաշվանցում եկամտային հարկին, ինչի արդյունքում Կոմիտեի տեղեկատվական բազայի առկա տվյալների համաձայն՝ «Իսատիս» ՍՊԸ-ն 20.04.2017թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Հրավերի՝

- 7.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն

հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservise.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.6 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտենից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
- 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:
- 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Իսատիս» ՍՊԸ-ն 20.04.2017թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Իսատիս»ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.07.2017թ. «Իսատիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ